ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՏՈՑԿՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 փետրվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության դաշնային սահմանապահ ծառայության պետ, գեներալ-գնդապետ Կոնստանտին Տոցկուն՝ ՀՀ ԱԱ նախարար Կառլոս Պետրոսյանի և Հայաստանում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովի ընկերակցությամբ:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով պատվարժան հյուրին, շեշտեց հայ-ռուսական դարավոր բարեկամության ու կապերի կարևորությունը, որոնք միահյուսված են փոխընդհանուր ռազմավարական շահերով, և իր գոհունակությունը հայտնեց հայ և ռուս սահմանապահների միջև առկա փոխվստահության և համագործակցության համար:

«Մեր աղոթքն է, որ երկիրը ապրի խաղաղության մեջ, չխաթարվի պատերազմներով, ողբով ու ավերով»,- ասաց Նորին Սրբությունը՝ մաղթելով Աստուծո օգնականությունը սահմանապահ զորքերին՝ ի շահ համընդհանուր խաղաղության:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն Տոցկին վստահություն հայտնեց, որ ռուս սահմանապահները կշարունակեն այնքան օգնել հայկական սահմանների պահպանությանը, որքան այն անհրաժեշտ կլինի հայ ժողովրդին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ